ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի

2024թ. ապրիլի 12-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 20-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացիկ վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):
2. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:
3. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
4. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Սերգեյի Ղազինյանին «ԵՊՀ պրոֆեսոր-էմերիտուս» պատվավոր կոչում շնորհելու միջնորդությամբ ԵՊՀ գիտական խորհրդին դիմելու հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ավարտական աշխատանքների պատրաստման ընթացիկ վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնի վարիչներն ամփոփ տեղեկություններ ներկայացրին ավարտական աշխատանքների պատրաստման ընթացիկ վիճակի մասին՝ արձանագրելով հնարավոր խնդրահարույց դեպքերը, առկա խնդիրները լուծելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնի վարիչները տեղեկացրին, որ սոցիոլոգիական հարցումների արդյունքները քննարկվել են ամբիոններում, առանձին դասախոսների հետ, քայլեր եմ ձեռնարկվել ուսանողների բարձրացրած խնդիրները լուծելու ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մարգարյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Սերգեյի

Ղազինյանին «ԵՊՀ պրոֆեսոր-էմերիտուս» պատվավոր կոչում շնորհելու միջնորդությամբ ԵՊՀ գիտական խորհրդին դիմելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. «ԵՊՀ պրոֆեսոր-էմերիտուս» պատվավոր կոչում շնորհելու համար ԵՊՀ գիտական խորհրդին առաջարկել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Սերգեյի Ղազինյանի թեկնածությունը:

5. ԼՍԵՑԻՆ. Ընթացիկ հարցեր:

5.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետից ԵՊՀ գիտական խորհրդի անդամի ընտրության մասին հարց:

Հաշվի առնելով, որ պրոֆ. Ա.Հայկյանցը ցանկություն է հայտնել դադարեցնել իր՝ որպես ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետից ընտրովի անդամի մասնակցությունը ԵՊՀ գիտական խորհրդում՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետից առաջարկվեց իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Սերգեյի Ղազինյանի՝ որպես ընտրովի անդամի թեկնածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

Խորհուրդն անկացրեց բաց քվեարկություն, որի արդյունքում Գագիկ Սերգեյի Ղազինյանը միաձայն ընտրվեց ԵՊՀ գիտական խորհրդի անդամ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը:

5.2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ մագիստրոսական կրթական ծրագրի՝ 2024-2026 թթ. ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու և «Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ» մագիստրոսական ծրագրում «Նոր տեխնոլոգիաները և մտավոր սեփականության իրավունք» ուսումնական դասընթացը «Արհեստական բանականություն և իրավունք» դասընթացով փոխարինելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պրոֆ. Ա. Հայկյանցը նշեց, որ առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպերը և արհեստական բանականության կիրառման առաջընթացով:

ՈՐՈՇԵՑԻՆ. «Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ» մագիստրոսական ծրագրում «Նոր տեխնոլոգիաները և մտավոր սեփականության իրավունք» ուսումնական դասընթացը փոխարինել«Արհեստական բանականություն և իրավունք» դասընթացով:

5.3. ԼՍԵՑԻՆ – Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ մագիստրոսական կրթական ծրագրի՝ 2024-2026 թթ. ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու և «Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն» մագիստրոսական ծրագրում «Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրներ» ուսումնական դասընթացը կամընտրական առարկայից պարտադիր դարձնելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պրոֆ. Դանիելյանը նշեց, որ օրենսդրական կարգավորումները ցույց են տալիս օրենսդրի կամքն առ այն, որ կոռուպցիայի դեմ համակարգային ու կայուն պայքարի համար անհրաժեշտ է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում անպայման լինի բարեվարքության հարցերով կազմակերպիչ և հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու, ինչը ենթադրում է հակակոռուպցիոն քաղաքականության, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում բավարար գիտելիքների իմացություն, որն ուսանողը կարող է ձեռք բերել այս առարկայի շրջանակում և այդ գիտելիքների ձեռքբերումը կոնկրետ մեկ կրթական ծրագրի շրջանակներում սահմանափակելը թույլ չի տալիս, որ ուսումնական դասընթացն առավել արդյունավետ ներազդեցություն ունենա ուսանողների առավել մեծ շրջանակի վրա: Բացի այդ, ուսումնական դասընթացը Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում պարտադիր դասընթաց լինելու դեպքում ուսանողները հնարավորություն կունենան աշխատաշուկայում առավել մրցունակ լինել և աշխատել ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության համար պատասխանատու վարչությունում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում, Կառավարությունում:

«Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարություն և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 23-ի N-1870-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ հաստատված են թվով 5 նպատակներ, որոնցից մեկը հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործումն է:

ՈՐՈՇԵՑԻՆ. «Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն» մագիստրոսական ծրագրում «Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրներ» ուսումնական դասընթացը կամընտրական առարկայից դարձնել պարտադիր:

5.4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առաջին տարվա հայցորդ Արսեն Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ Արսեն Վարդանյանի՝ «Ապացույցի հատկանիշների հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Դավիթ Մելքոնյանին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի վերականգնված մագիստրոս Սերյոժա Դավթյանի՝ մագիստրոսական թեզի թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վերականգնված մագիստրոս Սերյոժա Դավթյանի՝ «Արդար դատական քննության

սկզբունքի կիրառման հիմնահարցերը քրեական վարույթում» վերտառությամբ մագիստրոսական թեզի թեման.

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., ասիստենտ Գևորգ Բաղդասարյանին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.6. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետից ԵՊՀ գիտական խորհրդի անդամի ընտրության մասին հարց:

Հաշվի առնելով, որ պրոֆ. Ա.Հայկյանցը ցանկություն է հայտնել դադարեցնել իր՝ որպես ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետից ընտրովի անդամի մասնակցությունը ԵՊՀ գիտական խորհրդում՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետից առաջարկվեց իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Սերգեյի Ղազինյանի՝ որպես ընտրովի անդամի թեկնածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

Խորհուրդն անկացրեց բաց քվեարկություն, որի արդյունքում Գագիկ Սերգեյի Ղազինյանը միաձայն ընտրվեց ԵՊՀ գիտական խորհրդի անդամ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը:

5.7. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջ-նորդությունը՝ ամբիոնի հայցորդ Աղավնի Մադոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Աղավնի Մադոյանի՝ «Պետական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Վահե Հովհաննիսյանին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.8. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Նարեկ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Նարեկ Հարությունյանի՝ «Քրեական պատասխանատվությունը անօրինական միգրացիայի կազմակերպման համար. տեսական և գործնական հիմնախնդիրներ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյանին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.9. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Արմեն Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա. Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Արմեն Ասատրյանի՝ «Անօրինական միգրացիայի դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Աննա Մարգարյանին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.10. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտներ Շուշանիկ Ղուկասյանի և Անի Մութաֆյանի՝ «Մասնավոր իրավունք. թեստային առաջադրանքներ» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտներ Շուշանիկ Ղուկասյանի և Անի Մութաֆյանի՝ «Մասնավոր իրավունք. թեստային առաջադրանքներ» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրել երաշխավորության:

Խորհրդի նախագահ ***Գ. Ղազինյան***

Խորհրդի քարտուղար ***Տ.Սուջյան***